**Արձանագրություն N 2**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Կնիքների և դրոշմակնիքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» ապրիլի 2016թ.

Մասնակցում էին՝ ժամը՝ 10:00

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան**՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Աղավնի Բուդույան**՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան**՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արման Ղուկասյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան**՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-04» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի ապրիլի 07-ին, ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Կլոր կնիք | 320 000 |
| 2. | Դրոշմակնիք | 60 000 |

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը (անունը) | Հասցեն, հեռախոսահամարը |
|---|---|
| «ԱՏԱ» ՍՊԸ | ք. Երևան, Մալխասյանց 25, հեռ. (091)432071 |
| «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ.» ՍՊԸ | ք. Երևան, Սունդուկյան 27/100, հեռ. (077)674679 |
| «Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ | ք. Երևան, Երվանդ Քոչար 5, հեռ. (010)550554 |

4. Համակարգում 30.03.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**5. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

5.1 «Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5.2 «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ

ա) <<Ֆինանսական միջոցների մասին հայտարարության>> (Հավելված 3.4), որի փոխարեն կցված է <<Տեխնիկական միջոցների մասին հայտարարությունը>> (Հավելված 3.3):

5.3 «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ

ա) <<Տեխնիկական միջոցների մասին հայտարարության>> (Հավելված 3.3), որի փոխարեն կցված է սկանավորված դատարկ ֆայլ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1 «Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ

ա) <<Առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունում>> (Հավելված 4.1) նշված չեն չափաբաժինների համարները,

բ) <<Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարությունում>> (Հավելված 4.2) նշված չեն չափաբաժինների համարները:

6.2 «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ

ա) <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը>> (Հավելված 3.1) թերի է կազմված, ինչպես նաև հավելվածում նշված գումարը պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

6.3 «ԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ

ա) <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը>> (Հավելված 3.1) թերի է կազմված,

բ) <<Առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը>> (Հավելված 4.1) թերի է կազմված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Մասնակիցների առաջարկած գներն են՝

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | «Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ | | | | | «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ.» ՍՊԸ | | | | | «ԱՏԱ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Կլոր կնիք | 290 000 | 30 000 | 320 000 | | 320 000 | 260 000 | 32 000 | 292 000 | | 292 000 | 168 000 | 32 000 | 200 000 | | 200 000 |
| 2 | Դրոշմակնիք | 54 000 | 6 000 | 60 000 | | 60 000 | 64 000 | 16 000 | 80 000 | | 80 000 | 80 000 | 16 000 | 96 000 | | 96 000 |

«Տեխնիկա Պլյուս» ՓԲԸ-ն, «ՇՏԱՄՊ-Ն.Մ.Ռ.» ՍՊԸ-ն, «ԱՏԱ» ՍՊԸ-ն հայտերով ներկայացրել են իրենց կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ:

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. ապրիլի 11-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Տոնականյան

Անդամներ՝

Աղավնի Բոդոյան

Սարգիս Արմենակյան

Արման Ղուկասյան

Անահիտ Ավագյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան